

ք. Երևան

« 29 » հունվարի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Վահե Էլոյանի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար), որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրենի Ժ/պ Ռուբեն Տեր-Բաղդասարյանի, որը գործում է «Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 09 բաժին, 05 խումբ, 01 դասի 1148 ծրագրի 11001 «Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառմամբ (այսուհետ՝ ծրագիր) պետական աջակցության տրամադրումը, որի շրջանակներում Կազմակերպությունը իրականացնում է ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչների և մանկապատանեկան մարզադպրոցի մարզական խմբերում երեխաների ընդգրկման և մարզադպրոցի սաների համար ուսումնամարզական գործընթացի կազմակերպումը և մարզական հերթափոխի ապահովման նպատակով մարզիկների պատրաստումը (այսուհետ՝ Ծառայություն):

2. Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1 Կազմակերպությունը պարտավորվում է՝

2.1.1 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել 1.1 կետով սահմանված Ծառայությունը իրականացնելու համար,

2.1.2 ապահովել մատուցված Ծառայության հաշվառումը և հաշվապահական հաշվառման վարումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.1.3 յուրաքանչյուր ամսվան հաջորդող մինչև ամսվա տասը, Աշխատակազմ ներկայացնել նախորդ ամսվա մատուցված Ծառայության վերաբերյալ ոչ ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն հավելված N 1-ի,

2.1.4 յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող մինչև ամսվա տասը, Աշխատակազմ ներկայացնել մատուցված Ծառայության վերաբերյալ ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի,

2.1.5 Չձախսված գումարի վերջնական տարեվերջյան ազատ մնացորդը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.2 Աշխատակազմը պարտավորվում է՝

2.2.1 Կազմակերպությանը հատկացնել Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցները՝ համաձայն Պայմանագրի N 2 հավելվածի՝ «Վճարման ժամանակացույցի»,

2.2.2 Կազմակերպությանը տրամադրել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն:

2.3 Կազմակերպությունը իրավունք ունի՝

2.3.1 Աշխատակազմից ստանալու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող գումարը,

2.3.2 իրականացնել օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

2.4 Աշխատակազմն իրավունք ունի՝

2.4.1 ուսումնասիրել և ընդունել ներկայացվող ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունները՝ աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման դրական մասնագիտական եզրակացության հիման վրա, կամ հետ վերադարձնելու՝ բացասական եզրակացությամբ,

2.4.2 պարբերաբար ուսումնասիրել Կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների օգտագործման նպատակայնությունը,

2.4.3 պարբերաբար վերլուծել Կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա բարելավման համար, ինչպես նաև տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման վերաբերյալ,

2.4.4 անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունից պահանջել ներկայացնելու փաստաթղթեր՝ հատկացված դրամական միջոցների օգտագործման նպատակայնությունը գնահատելու համար,

2.4.5 իրականացնել օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 2019 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 24, 991. 5 (քսանչորս միլիոն ինը հարյուր ինսունմեկ հազար հինգ հարյուր) հազար Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

3.2 Աշխատակազմը վճարումները իրականացնում է Պայմանագրի N 2 հավելվածի՝ «Վճարման ժամանակացույցի» համաձայն՝ ամսական կտրվածքով, ոչ ուշ քան մինչև հաջորդող ամսվա տասը:

4. Ծառայության հանձնումը և ընդունումը

4.1 Կազմակերպության կողմից մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա տասը Պայմանագրի 2.1.3 ենթակետով ներկայացված հաշվետվությունը Աշխատակազմի կողմից ընդունվում է կամ ընդունվում է հայտնաբերված թերությունները Կազմակերպության կողմից վերացնելուց հետո:

4.2 Պայմանագրի 2.4.1 ենթակետով սահմանված դրական եզրակացության հիման վրա՝ մատուցված Ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

5. Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխումը, դադարումը և (կամ) լուծումը

5.1 Պայմանագրից ծագող պարտավորությունները ուժի մեջ են մտնում Պայմանագրի կնքման պահից, տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

5.2 Պայմանագրի փոփոխումը և (կամ) լրացումը կատարվում է Կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրով, որը Պայմանագրի անբաժանելի մասն է:

5.3 Պայմանագիրը դադարեցվում և (կամ) լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Այլ պայմաններ

6.1 Պայմանագրում ցանկացած փոփոխություն և (կամ) լրացում կատարվում է գրավոր:

6.2 Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3 Պայմանագրի հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

6.4 Պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սպորտի և երիտասարդության

«Վանաձորի բռնցքամարտի

հարցերի նախարարություն

մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ

ք. Երևան, Աբովյան 9

ք.Վանաձոր, Երևանյան խճ. 171/1

Հ/Հ՝ 900011059020

Հ/Հ 900238000690

ՀՎՀՀ՝ 02586282

ՀՎՀՀ 06950146

Գլխավոր քարտուղար՝

Տնօրենի ժ/պ՝



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2019 թվականի _____ (ամիսը) _____ ամսին կատարված աշխատանքների վերաբերյալ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության _____

_____ ՊՈԱԿ-ը՝ համաձայն կնքված
պայմանագրի 2019 թ. _____ (ամիսը) _____ ամսին կատարել է հետևյալ աշխատանքները՝

Մարզադպրոցի _____ մարզիչների _____ (մարզիչների թիվը) _____ (որ մարզածներից քանի մարզիկ)

կազմավորված _____ խմբերում պարապել են _____ սաներ, որից _____ (խմբերի թիվը) _____ (սաների թիվը)

(խմբերը ըստ մարզածների և սաների քանակի)

Տվյալ ամսվա արդյունքները _____

Լրացուցիչ տեղեկություններ՝

ամսվա սկզբին սաների թիվը _____	կրթաթոշակ ստացողների թիվը _____
ամսվա սկզբին մարզիչների թիվը _____	
ամսվա ընթացքում պակասել են սան _____	կրթաթոշակ ստացողները _____
մարզիչ _____	
ամսվա ընթացքում ավելացել են սան _____	կրթաթոշակ ստացողները _____
մարզիչ _____	
ամսվա վերջին սաների թիվը _____	կրթաթոշակ ստացողների թիվը _____
ամսվա վերջին մարզիչների թիվը _____	

Աշխատանքներն իրականացվել են հաստատված ժամանակացույցին և որակին համապատասխան:

Կազմակերպության ղեկավար՝ _____ (անունը, ազգանունը, ստորագրությունը)

Տվյալներն ուսումնասիրեց Մարզ. կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչության պետ՝ _____ (անունը, ազգանունը, ստորագրությունը)

Մանկապատանեկան սպորտի զարգացման բաժնի պետ՝ _____ (անունը, ազգանունը, ստորագրությունը)

Մասնագետ՝ _____ (անունը, ազգանունը, ստորագրությունը)

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
«Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն»
ք. Երևան, Արվյան 9
Հ/Հ՝ 900011059020
ՀՎՀՀ՝ 02586282
Գլխավոր քարտուղար

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Վանաձորի բոնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
ք.Վանաձոր, Երևանյան խճ. 171/1
Հ/Հ՝ 900238000690
Հ/Հ՝ 06950146
Տնօրենի ժ/պ՝



Կ.Տ. _____ Գ. Էլոյան _____ Ռ. Տեր-Բաղդասարյան